

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 141

Կանայք դատարկ գերեզմանի առաջին յայտնաբերողներն էին– Կանայք առաջին դարայ Պաղեստինում համարում էին որպէս երկրորդ դասակարգի քաղաքացիներ, եւ նրանց վկայութիւնը նկատուում էր որպէս ստորադաս եւ անկարելի: Հաշի առնել այս, խիստ նշանաւոր է որ Աւետարանները արձանագրում են թէ դատարկ գերեզմանի առաջին յայտնաբերողները, ու նաեւ առաջին անձիք որոնց յարութիւն առած Յիսուսը երեւեցաւ, կանայք էին ու ոչ տղամարդիկ, որոնք գնացին եւ լուրը տարան աշակերտներին (Մատթէոս 28:1, 7-10, Մարկոս 16:1-9, Ղուկաս 24:9-10, Յովհաննէս 20:2, 1-18): Այս մի մեծ առանձնաշնորհում եւ պատիւ էր շնորհուած այդ կանանց, մի հիմնական շեղում օրայ սովորութիւնից: Եթէ այդ շինուած կամ հնարուած պատմութիւն լինէր ապա անշուշտ տղամարդ աշակերտները պիտի լինէին դրանք որոնք դատարկ գերեզմանը յայտնաբերեցին, յարութիւն առած Յիսուսին հանդիպեցին, եւ Նրա յարութիւնը հռչակեցին ուրիշներին: Բայց այս Աստուծոյ պատմութիւնն էր ու ոչ մարդունը, եւ ուստի Աւետարանները նկարագրում են պատահած դէպքի իրականութիւնը ու ոչ այդ ինչ որ ընդունելի էր:

Քրիստոսի աշակերտները իրենց համոզմունքների համար մեռան – Ականատես լինելով իրենց Տիրոջ ձերբակալումը, ծաղրումը, ծեծելը, խայտառակութիւնը, եւ ամօթալի ու ցաւալի մահը, Աստուածաշունչը բացատրում է աշակերտների դրութիւնը որպէս վախեցած, յուսահատուած, շփոթուած ու կասկածելի (Մարկոս 14:67-72, Ղուկաս 24:21-24, Յովհաննէս 20:11-13, 19ա, 24-25): Կթի որ այդ պահին որեւէ Քրիստոնէական շարժում պիտի դադարէր: Բայց շուտով դրանից յետոյ կարդում ենք թէ այդ աշակերտների կեցածքը եւ դրութիւնը հիմնովին փոխուեցին: Նրանց վիշտն ու տխրութիւնը փոխուեցին ցնծութեան (Ղուկաս 24:40-41, Յովհաննէս 16:19-22, 20:19). նրանց կասկածը փոխուեց հաւատքի (Յովհաննէս 20:26-28). եւ նրանց սարսափն ու վախկոտութիւնը փոխուեցին համոզմունքի եւ համարձակութեան (Գործք Առաքելոց 2:14-47, 4:1-31, 5:17-42, եւ այլն): Քրիստոսի առաքեալները թողեցին իրենց սովորական կեանքերը, եւ հաստատակամօրէն նւիրեցին իրենց հռչակելու Յիսուս Քրիստոսի միջոցով եղած փրկութեան պատգամը: Նրանք անարգեցին, ծեծեցին, բանտարկեցին, քարկոծեցին եւ չարչարեցին, սակայն մնացին անսասանօրէն հաւատարիմ Քրիստոսին, եւ նոյնիսկ պատրաստ մեռնելու իրենց հաւատքի համար (Գործք Առաքելոց 12:1-2): Ըստ աւանդութեան առաքեալների մեծամասնութիւնը կրեցին խիստ տառապանք եւ նահատակեցին՝ մահուան մատնուելով իրենց Տիրոջ համար: Այսպէս ծայրայեղ կեցածքի եւ վարքի փոփոխութիւնը միայն կարելի է բացատրել Քրիստոսի յարութեան իրականութիւնով, որ նրանք տեսել էին իրենց խաչեալ Տիրոջը մեռելներիցը յարութիւն առած:

Հրէական աւանդութիւնների եւ ծէսերի փոփոխութիւններ – Հրէայ ժողովուրդը համարում էին իրենց ազգային աւանդութիւնները, ծէսերը, տօները եւ ուրիշ հանրային հաստատութիւնները որպէս չափազանց կարեւոր իրենց համար եւ իրենց ինքնութեան համար. եւ Աստուծոյ ստացած նրանք տօնել եւ պաշտպանել են դրանք, եւ Աբրահամի ու Մովսէսի ժամանակակից ի վեր յանձնել են դրանք սերունդից սերունդ: Դրանց մերժելը հաւասար էր կտրել կամ օտարանալ Աստուծոյ եւ Նրա ժողովրդից (Ծննդոց 17:14, Ելից 12:15, 31:14, Թւոց 9:13):

Բայց զարմանալին այն է որ Քրիստոսի մահից ու յարութիւնից յետոյ կարեւոր Հրէական աւանդութիւնները փոխուեցին: Կենդանի գոհերի (պատարագների) մատուցանումը յանկարծակի դադարեց Քրիստոսի աշակերտների կողմից, որոնք հասկացան որ Յիսուսն էր Աստուծոյ ճշմարիտ գառը, որը մատուցանեց իրենց մեղքերի համար (Յովհաննէս 1:29, Եբրայեցի 9): Ծաբաթը, ժողովրդի համար եօթներորդ հանգստութեան օրը, յանկարծակի փոխուեց Ծաբաթ օրից Կիրակի օրը՝ Քրիստոսի յաղթական յարութեան օրը, եւ ուստի Աստուծոյ ժողովրդի հաւաքոյթի եւ պաշտամունքի օրը (Գործք Առաքելոց 20:7, Ա. Կորնթացիս 16:2, Յայտնութիւն 1:10), անդրադարձելով թէ Յիսուսն էր Ծաբաթայ իրագործումը՝ որը տալիս է Իր ժողովրդին յախտեանկան հանգիստ (Կողոսացիս 2:16-17, Եբրայեցիս 4:1-11): Զատկայ կերակուրը, որը յիշատակ էր իրենց Եգիպտոսում եղած տառապանքը եւ Աստուծոյ ձեռքով իրենց ելքը, ձեւափոխուեց Յիսուսի կողմից հաստատելով Տէրունական Ընթրիքը (Ղուկաս 22:19-20, Ա. Կորնթացիս 11:23-32), որը Իր հետեւողները տօնակատարեցին, գիտակցելով թէ Յիսուս Քրիստոսն էր իրենց Զատիկը (Եսայիա 53:7, Ա. Կորնթացիս 5:7, Ա. Պետրոս 1:18-19): Նաեւ թլփատութիւնը՝ հին ուխտի նշանը, փոխարինուեց մկրտութեան՝ որպէս նոր ուխտի նշանը (Կողոսացիս 2:11-12), եւ Քրիստոսի հետեւողները այլեւս պէտք չունէին թլփատիւն, այլ մկրտուում էին (Մատթէոս 28:19, Գործք Առաքելոց 2:36-41, Գաղատացիս 5:6, 6:15), ներկայացնելով իրենց մահն ու յարութիւնը Նրանում (Հռովմայեցիս 6:4-8):

Բոլոր սրանք հիմնական փոփոխութիւններ էին, որոնք ոչ մի Հրէայ կ'նախաձեռնէր եւ իր Աստուծոյ եւ համայնքից կտրուելու վտանգը յանձն առնէր, բացի միայն որ մի ծայրաստիճան բան էր տեղի ունեցեր: Քրիստոսի փառաւոր յարութիւնը եւ Իր աշակերտներին Իր երեւոյթն էր որ յեղաշրջեց դրանց եւ դրանց կեանքերը յախտեան, եւ դրանից ի վեր փոխել է շատերի կեանքերը ամբողջ աշխարհում՝ որոնք վստահել են Յիսուսին որպէս իրենց Տէրն ու Փրկիչը: